

ԵԿԵՂԵՑԻԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 1-ին, երկուշաբթի.—Սրբոց Սուքիասեանց վկայիցն:
Այսօր Ս. Հռիփսիմե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 5-ին, շաբաթ.—Սրբոյն Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Փետրվարի 10-ին, հինգշաբթի.—Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանից հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

* * *

Փետրվարի 12-ին, շաբաթ.—Կոստանդնուպոլսոյ Ս. ժողովոյն՝ հարիւր յիսուն Հայրապետացն (381 թ.):

Այսօր Ս. Հռիփսիմե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Փետրվարի 13-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեա գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը:

* * *

Փետրվարի 19-ին, շաբաթ.—Սրբոյն Թէոդորոսի զօրավարին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Փետրվարի 20-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 16)՝ անդրադառնալով «Ազդարար» թերթի հիմնադրման 200-ամյակին, որից հետո Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ նվիրված «Ազդարար» թերթի 200-ամյակին և նրա հիմնադիր երջանկահիշատակ Տ. Հարությունն քհն. Ծմավոնյանի մահվան 170-ամյակին:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն:

* * *

Փետրվարի 26-ին, շաբաթ.—Սրբոցն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին, և միւս Կիւրղի եպիսկոպոսին, և մօրն նորա Աննայի:

Այսօր Ս. Ծողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն.

ԾԱՂԿԱՁԱՐԴԻ ՇԱՐԱԿԱՆ

Քրիստոս, քո գալուստն այսօր
Երուսաղէմ, իբրեւ նոր, սուրբ եկեղեցի
Բարեբանում ենք յաղթական երգով.
Օրհնեալ է եկեալն Տիրոջ անուամբ:
Քեզ, որ մեր փրկութեան համար
Յանձն առար աւանակի վրայ նստել.
Մանուկների հետ բարեբանում ենք.
Օրհնեալ է եկեալն Տիրոջ անուամբ:
Ով թագաւոր երկնային,
Անշարժ պահիր քո եկեղեցին
Եւ քո անունը երկրպագողներիս
Պահիր խաղաղութեան մէջ:

Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

* * *

Փետրվարի 27-ին, կիրակի.—Անառակի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց գերշ. Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 5-ին, շաբաթ.—Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին, և հայրապետին մերոյ Յովհաննու Օձնեցւոյն, և վարդապետացն մերոց՝ Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբդ. Քիլեճյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա տոնին պատշաճող քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Մարտի 6-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 20):

* * *

Մարտի 12-ին, շաբաթ.—Սրբոց Մանկանցն քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:

Այսօր Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գրիգոր սրկ. Ուզունյանը:

* * *

Մարտի 13-ին, կիրակի.—Դատավորի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

Մարտի 19-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Մարտի 20-ին, կիրակի.—Գալստյան կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբդ. Զիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 26-ին, շաբաթ.—Յիշատակ յարութեան Ղազարու:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը:

* * *

Մարտի 27-ին, կիրակի.—Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում կատարվեց «Դոնբացեք»-ի արարողություն: